

Աստուածայայտնութեան Ութօրէի Շրջանին

ՕՐԱԿԱՆ ԱՂՕԹԱԿԱՐԳ



Use Daily From Dec. 30 – Jan 13

ՕՐԱԿԱՆ ԱՂՕԹԱԿԱՐԳ

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՈՒԹՕՐԷԻ ՇՐՋԱՆԻՆ

Հետևելու աղօթքները կը կեդրոնանան Յիսուս Քրիստոսի Ծննդեան եւ Մկրտութեան վրայ: Աստուածայայտնութեան Տօնը, ութօրեայ տօնախմբութիւն մըն է երբ Յիսուս կը յայտնուի մեզի որպէս Աստուած մարմնացեալ, Փրկիչը աշխարհի: Աստուածայայտնութեան տօնին մենք կը մտաբերենք մեր անձնական մկրտութիւնը, այն ժամանակ, երբ մենք դրուեցանք փրկութեան ճանապարհին վրայ: Մենք կ'ապրինք վկայակոչելու թէ ո՞վ է Յիսուս, ինք ի՞նչ իրագործեց, եւ իր խոստումը բարձրացնելու յաւիտենական կեանքի բոլոր անոնց, որոնք զինք կը ծառայեն խոնարհաբար:

Հետևելու աղօթք մըն է Արեւելեան Թեմի հաւատացեալներուն, որ միասին աղօթենք, միաւորելով մեր մտահոգութիւնները, կառուցանելու համար մեր Տիրոջ մարմինը: Այս աղօթքները քաղուած են Հայաստանեայց եկեղեցւոյ սուրբ աւանդութիւններէն, եւ աղօթքներուն մեծամասնութիւնը առնուած է ժամագիրքէն:

Կը քաջալերենք մեր բոլոր հաւատացեալները, որ օրը առնուազն տասը վայրկեան բարձրաձայն կարդան այս աղօթքները սկիզբէն մինչեւ վերջ. նախընտրելի է որ ընթերցողները տրամադրեն մասնաւոր ժամանակ մը եւ յատուկ վայր մը աղօթելու, ըլլայ առանձին, ընտանեկան եւ կամ նոյնիսկ բարեկամներով: Կարելի է նաեւ ստեղծել հոգեւոր մթնոլորտ մը ունենալով աղօթասեղան մը զետեղելով վրան խաչ, խաչքար, սրբապատկեր, մոմ, խումկ եւ այլն:

Այս աղօթելու գաղափարը սկզբնակէտն է ամենօրեայ աղօթքի որ պէտք է դառնայ սովորութիւն, ուր մեր փառաբանութիւնը, ապաշխարութիւնը, եւ վերակոդմնորոշումը առ Աստուած, կը դառնայ բնական եւ սովորական մեր կեանքէն ներս:

Թող Տէրը լսէ մեր աղօթքները եւ ողորմէ մեզ:

✠ Խաչակնքէ

Աղօթքները քաղուած են Հայաստանեայց եկեղեցւոյ ժամագիրքէն, բացի հանգանակէն, որ առնուած է Հայաստանեայց եկեղեցւոյ Սուրբ Մկրտութեան արարողութենէն: Եզեկիէլ մարգարէի ընթերցումը թարգմանուած է գրաբար Աստուածաշունչէն Նիկողոս քինյ. Ազնաւորեանի կողմէ: Ս. Պօղոս առաքեալի Հռոմէացիներուն ուղղած թուղթի ընթերցումը առնուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց տապարանէն 1981-ին լոյս տեսած գրքոյկէն: Սաղմոսները՝ Սաղմոսաց Դաւթի Գիրքէն, Սուրբ Գրոց Ուսումնասիրութեան Կեդրոնին կողմէն հրատարակուած, Զիթենեաց Լեո, Երուսաղէմ, 1988: «Բժշկութեան համար» աղօթքը թարգմանուած է Դանիէլ Եպիսկոպոս Ֆրնտրքեանի 2018 թուականին խմբագրած գրութենէն: Մնացեալ աշխարհաբարի թարգմանութիւնները կատարած է Ընծակ ա. քինյ. Նալպանտեան (Ներսէսէալ Ս. Գրիգոր Նարեկացիի քարոզը իր Տօնական Գործերէն, թարգմանուած՝ Դոկտ. Արրահամ Տէրեանի կողմէ 2016 թուականին): Այս աղօթակարգը հաւաքուած է Էրիք Սրկ. Վոզիի կողմէ: Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի Արեւելեան Թեմին, 2021.

† Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս.

Ձեռքերը բարձրացուցած եւ բազկատարած

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեացէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեր թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: † Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Ձեռքերն ու մատները միացուցած

Հաւատամք † յԱմենասուրբ Երրորդութիւնն, ի Հայր, եւ յՈրդի, եւ ի Սուրբ Հոգի: Չաւետումն Գաբրիէլի, զԾնունդն Քրիստոսի • զՄկրտութիւնն, զԶարչարանս, զԽաչելութիւնն, զԹաղումն երեքօրեայ, զՅարութիւնն, զաստուածապէս Համբարձումն, զՆստիլն ընդ աջմէ Հօր, զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ Գալուստն՝ խոստովանիմք եւ հաւատամք:

† Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ: (*Կրկնել երեք անգամ*)

Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս աստուածածին Մարիամ՝ մայր քրիստոսի, մատո՛ զաղաչանս մեր որդւոյ քոյ եւ աստուծոյ մերոյ փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

† Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ (*Երկրպագել մէկ անգամ*)

† Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ (*Երկրպագել մէկ անգամ*)

† Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ (*Երկրպագել մէկ անգամ*)

† Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ Տէ՛ր, ողորմեա՛ (*Երկրպագել մէկ անգամ*)

Սուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր, որք զչարսն պարտեցին, նեղութեանցն համբերեցին, լուսեղին եւ երկնային անթառամ պսակացն արժանի եղեն: Աղօթիւք նոցա եւ բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի: Ամենակա՛լ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Աղօթել սուրբերուն օրը

Պսակիչ սրբոց Քրիստոս, որ պսակես զսուրբս քո եւ առնես զկամս երկիւղածաց քոց եւ նայիս սիրով եւ քաղցրութեամբ յարարածս քո, լո՛ւր մեզ յերկնից ի սրբութենէ քումմէ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց եւ Ս. (անուն-ի) որոց այսօր է յիշատակ: Լո՛ւր մեզ, Տէր, եւ ողորմեա՛.

Օգնեա՛ մեզ, Տէ՛ր, օգնեա՛ մեզ, Աստուած Փրկի՛չ մեր, վասն մեծի փառաց անուանդ քո: Տէ՛ր, փրկեա՛ զմեզ եւ քաւեա՛ զմեղս մեր վասն անուան քոյ սրբոյ: Պարսպեալ պահեա՛ զ՛առ ի քեզ զապաւինեալ եւ գյուսացեալ ժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական † խաչիւղ քով ի խաղաղութեան: Փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն, արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ † Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս Բ

Ինչպե՞ս հեթանոսները խոռվքի մատնուեցան եւ ժողովուրդները՝ զուր
մտածումներու:

Աշխարհի թագաւորները ոտքի ելան եւ իշխանները հաւաքուեցան Տիրոջ
եւ Անոր օծեալին համար:

Խզե՛նք անոնց կապանքները եւ անդի՛ն նետենք անոնց լուծը:

Ան որ երկինք կը բնակի պիտի ծաղրէ զանոնք եւ Տէրը պիտի արհամարհէ
զանոնք:

Այն ատեն, Ան պիտի խօսի իրենց հետ բարկութեամբ եւ պիտի խոռվէ
զանոնք սրտմտութեամբ:

Անոր ձեռքով եւ թաքաւոր հաստատուեցայ Անոր սուրբ լերան՝ Սիոնի
վրայ, հռչակելու Տիրոջ հրամանները:

Տէրը ըսաւ. «Դուն եւ իմ որդին եւ եւ ծնունդ տուի քեզի այսօր:

«Ուզե՛ ինձմէ եւ եւ պիտի տամ քեզի բոլոր ազգերը իբրեւ ժառանգութիւն
եւ իշխանութիւն՝ մինչեւ աշխարհին ծայրը:

«Դուն պիտի հովուես զանոնք երկաթէ գաւազանով եւ պիտի փշրես
զանոնք հողէ ամանի մը պէս:»

Արդ, դո՛ւք թագաւորներ, ուշադրութիւն քրէք եւ դո՛ւք, որ կը դատէք
երկիրը, խրատուեցէք:

Ծառայեցէ՛ք Տիրոջ երկիւղածութեամբ եւ դողալով ուրախացէք Անոր
ներկայութեան:

Ընդունեցէ՛ք Տիրոջ խրատը որ չբարկանայ եւ դուք ալ չհեռանաք
արդարութեան ճամբաներէն:

Անոր բարկութիւնը շուտով կը բորբոքի. երանի անոնց, որոնց յոյսն է Տէրը:

✠ Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, • այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Աղօթք Բժշկութեան Համար

Անսկիզբն Աստուած՝ սուրբդ սրբոց, որ զՄիածին քո Որդիդ առաքեցեր
բժշկել զամենայն ախտս հոգւոց եւ մարմնոց մերոց. առաքեա՛ զՀոգիդ քո
սուրբ, եւ սրբեա՛ (անուն) ծառայս քո, եւ ազատեա՛ յամենայն մեղաց. զի
ողորմած եւ եւ գթած: Եւ Քեզ փառս մատուցանեմք ✠ Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ընթերցում Եզեկիէլ Մարգարէն (36:23-28)

Եւ իմ մեծ անունը պիտի մաքրեմ այն ազգերու մէջ, որոնց մէջ պղծուեցաւ՝ իմ անունը զոր դուք պղծեցիք իրենց մէջ: Եւ այն ազգերը պիտի գիտնան, որ ես եմ Տէրը, կ'ըսէ Ադոնայի Տէրը, երբ մաքրուիմ ձեր մէջ, հակառակ անոնց [կամքին]: Եւ ես ձեզ հեթանոսներէն պիտի առնեմ, եւ պիտի հաւաքեմ ձեզ բոլոր ազգերէն, եւ պիտի տանիմ ձեզ ձեր երկիրը: Եւ ձեր վրայ սուրբ ջուր պիտի ցանեմ, եւ պիտի սրբուիք բոլոր ձեր պղծութիւններէն, եւ պիտի մաքրեմ ես ձեզ բոլոր ձեր կոտորէրէն: Եւ ձեզի նոր սիրտ եւ նոր հոգի պիտի տամ: Ես պիտի նորոգեմ ձեր մէջ՝ քարեղէն սիրտը պիտի հանեմ ձեր մարմիններէն, եւ ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ: Եւ իմ Հոգիս պիտի տամ ձեզի, եւ պիտի կառուցեմ, որպէսզի իմ արդարութեան մէջ քայլէք: Եւ իմ օրէնքները պիտի պահէք եւ պիտի կատարէք: Եւ պիտի բնակիք այն երկրին մէջ, զոր ձեր հայրերը տուին, եւ դուք ինձ ժողովուրդ պիտի ըլլաք, եւ ես ձեզ՝ Աստուած պիտի ըլլամ:

Աղօթք Ութօրէից Աստուածայայտնութեան

Իւրաքանչիւր ծունկ կը խոնարհի պաշտամունքով քու ամենագոր եւ յաղթական տէրութեանդ (առջեւ) եւ քու թագաւորութիւնդ փառաւորուած է ամենուն կողմէն: Ուշադրութիւն դարձուր մեր պաշտամունքին եւ սորվեցուր մեզ ընելու ինչ որ ճիշդ է եւ ճշմարիտ: Քանզի դուն ես խաղաղութեան Աստուածը: Դուն խաբանեցիր թշնամանքն ու վերահաստատեցիր խաղաղութիւնը երկնի եւ երկրի վրայ: Դուն յայտարարեցիր մերձաւորաց եւ հեռաւորաց նոր շնորհներուդ բարիքները: Մենք եւս արժանի ըլլանք քու փառաւոր շնորհքիդ, ինչպէս որ դուն կը միացնես մեզ քու ճշմարիտ պաշտողներուդ հետ, **†** մեր Տէր Աստուածն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս, որ փառաբանեալ ես Հօր եւ Սուրբ Հոգիին հետ, հիմա եւ միշտ եւ յաւիտենապէս. Ամէն:

Աստուածայայտնութեան Ճարական

Փառք ի բարձունս Աստուծոյ, խաղաղութիւն երկրի վրայ եւ համերաշխութիւն բոլոր ժողովուրդներու միջեւ: Փառաբանութիւն քեզ բարձունքներուն մէջ: Օրհնեալ ես Տէր մեր Աստուածը: Կը փառաբանենք եւ կը գովաբանենք քեզ: Մենք կը յայտարարենք քեզ որպէս Տէր եւ մենք կ'երկրպագենք քեզ պաշտամունքով: Մենք կը պաշտենք քեզ: Շնորհակալ ենք քեզ Տէր, քու մեծ փառքիդ համար — Տէր, Թագաւոր, Երկնային Սուրբ — Աստուած եւ Հայր ամենակալ:

Տէր եւ Հօրը Միածին Որդին, Յիսուս Քրիստոս եւ Սուրբ Որդի, Տէր Աստուած, Գառն Աստուծոյ եւ Հօր Որդին, դուն ստանձնեցիր մեր մարդկային բնութիւնը Կոյսէն: Դուն ողորմութիւն ցոյց տուիր մեզ եւ աշխարհի մեղքերը վերցուցիր: Այժմ ուշադրութիւն դարձուր մեր խնդրանքներուն: Ո՛վ Սուրբդ, Հօր պատւոյ աջ կողմը նստած գահին, ողորմէ մեզի: Քանզի միայն դուն սուրբ ես: Դուն միայն փառաբանուած ես : Դուն միայն մեր Տէրն ես, Յիսուս Քրիստոս:

Ո՛վ Սուրբ Հոգի, Դուն եւս Տէր ես, Աստուած Փառքի մէջ Հօրը հետ: Ամէն:

✠ Փառք, պատիւ եւ երկրպագութիւն ի բարձունս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, հիմա եւ միշտ եւ յաւիտենապէս. Ամէն:

Արեգակն արդարութեան, այսօր դուն յայտնուեցար մարդկութեան: Մարդանալով, դուն սրբագործեցիր ջուրերը, վերստին ծնունդ տալով մեզ Սուրբ Հոգիին մկրտութեամբ:

Ընթերցում Ս. Պօղոս Առաքեալի Հռոմեացիներուն Ուղղած Թուղթն (6:3-11)

Կամ չէ՞ք գիտեր թէ մենք բոլորս, որ մկրտուեցանք Յիսուս Քրիստոսով, անոր հետ թաղուեցանք մահուան մէջ, որպէսզի ինչպէս որ Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն. Հօր փառքով, այնպէս ալ մենք ընթանանք նոր կեանքի մէջ. որովհետեւ եթէ անոր մահուան նմանութեամբ տնկակից եղանք անոր՝ պիտի ըլլանք նաեւ անոր յարութեան նմանութեամբ: Սա իմացէք, որ մեր հին մարդը խաչակից եղաւ անոր, որպէսզի քայքայուի մեղքի մարմինը, եւ այլեւս մենք չծառայենք մեղքին. որովհետեւ ով որ կը մեռնի՝ ազատ է մեղքէ: Իսկ եթէ մեռանք Քրիստոսի հետ՝ կը հաւանանք թէ անոր հետ ալ պիտի ապրինք: Գիտենք թէ Քրիստոս յարութիւն առած ըլլալով մեռելներէն՝ այլեւս չի մեռնիր, եւ մահը այլեւս չի տիրեր անոր վրայ. որովհետեւ Ան որ մեռաւ՝ մեղքին նկատմամբ մեռաւ միանգամընդմիշտ, եւ Ան որ կենդանի է՝ կենդանի է Աստուծոյ համար: Նոյնպէս եւ դուք մեռած համարեցէք ձեզ մեղքի նկատմամբ, բայց կենդանի՝ Աստուծոյ համար՝ մեր Տէր Քրիստոս Յիսուսով:

Քարոզ Սուրբ Ծննդեան եւ Մկրտութեան Ս. Գրիգոր Նարեկացիէն

Գանձ անթառամ, անյայտ մեծութիւն, ահարկու, աննկարագրելի խորհուրդ, որ երեւեցար աշխարհին, սուրբ Աստուածածին: Անհասկնալի Բանն Աստուած, որուն դուն մարմնապէս մէջդ կրեցիր եւ ծնունդ տուիր աշխարհի Փրկչին, բարձրացնելով անոր քու կուրծքիդ վրայ սնուելու, այն որ յայտնուեցաւ այսօր յուրախութիւն մարդկային ցեղին, ազատելու համար առաջին Ադամի նախկին անեծքներէն, նաեւ սրբելու դատապարտութեան կնիքը, դրուած՝ նախամօր Եւայի վրայ, ծնունդ տալով Միածին Որդիին:

— Կը խնդրենք բարեխօսէ՛, որ Քրիստոս Թագաւորը մեզի օգնութեան գայ, կը պաղատինք:

Դուն, փառաւորեալն ու թանկագին գոհարը, Աստուածածին, որ որովայնիդ մէջ կրեցիր Բան Աստուածը, որ ի սկզբանէ եւ յաւիտենականութենէ, նմանութեամբը մեր բնութեան, մարմին առաւ եւ չարչարուեցաւ մեզի համար, համբերութեամբ տանելով խաչը, դրուելով նոր անապականելի գերեզմանի մը մէջ, հրաշալիօրէն յարութիւն առնելով երրորդ օրը, արեւանման պայծառութեամբ, սիրելով մեզ, նորօք ծնեալը մկրտութեան աւազանէն:

— Կը խնդրենք, բարեխօսէ՛, որ Քրիստոս Թագաւորը մեզի օգնութեան գայ, կը պաղատինք:

Բարեխօսութիւն Ս. Յովհաննէս Նախակարապետ Մկրտչի

Բարեխօսութիւն Ս. Յովհաննէս Նախակարապետ Մկրտչի

Երկնային Փեսայ, անստուեր փայլուն լոյս, դուն իջար երկինքէն քու Հարսիդ՝ Եկեղեցւոյ սիրոյ ողջագութեամբ: Այս, քու Բարեկամդ եւ Փեսեղբայրդ, Յովհաննէսը խօսեցաւ քեզի:

— Իր աղօթքներով, ողորմէ մեզի:

Անհասանելի քառակերպին եւ անտեսանելի Սերովբէներուն, Ով Սուրբ Սրբոց եւ Տէր բոլորին, դուն եկար Յորդանան, խնդրելով ծառայէն մաքրել քեզ ջուրով, լուացուելու Ադամի մեղքէն:

— Իր աղօթքներով, ողորմէ մեզի:

Ամուլ կնոջ Որդին վկայեց որ դուն ես Գառն Աստուծոյ, որ մեղքերը կ'առնէ: Դուն գինք յայտարարեցիր Ամենարդարը, Ամենամեծը ծնեալ կիներէ, Լոյսը Օրինաց: Դժոխքին մէջ ան հռչակեց քու փրկչական գալուստդ:

— Իր աղօթքներով, ողորմէ մեզի:

Սուրբ Ներսէս Շնորհալիի 24 Աղօթքներէն

Փառաւորեա՛լ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս քո եւ կատարեա՛ ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութեամբ սրբուիւոյ Աստուածածնին եւ Յովհաննու մկրտչին, եւ սրբոյն Ստեփանոսի նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ սրբոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց եւ ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց: **†** Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ո՛վ Աստուածամայր, խոստովանելով, Ուղղափառ Եկեղեցին կը պաշտէ քեզ, մինչ բազմաչեայ Քերովբէներն եւ հրեղէն գահերը եւ վեց թելեան Սերովբէները չկրցան համարձակիլ նայելու անապականելի Տիրոջ, դուն զինքը կրեցիր քու որովայնիդ մէջ անսերմն նման՝ ծառայի: Եւ դուն ծնունդ տուիր բոլորին Աստծոյն որպէս մարդ — այն որ մարմին առաւ քեզմէ, աննկարագրելի Բանն — աշխարհի փրկութեան եւ մեր հոգիներու կենաց համար:


Ամենօրինեալ սրբուիի, եւ միշտ կոյս Աստուածածին Մարիամ, բարեխօսեա՛ առ Տէր վասն իմ մեղաւորիս:

Պահպանեա՛ զմեզ, Քրիստո՛ս Աստուած մեր, ընդ հովանեաւ **†** սուրբ եւ պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան, փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն: Արժանաւորեա՛ գոհութեամբ **†** փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ձեզի եւ մեզի մեծ Աւետիս՝
Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ՝
Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի՝









WWW.VEMKAR.US

EASTERN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA